ВЕСТНИК АКАДЕМИИ НАУК СССР 1966, № 1

«Տրանսպորտի զարգացման գիտական խնդիրները» ընդհանուր խորագրի տակ տպագրված են ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ Ա. Վ. Գորինովի «ՍՍՌՄ միասնական տրանսպորտային սիստեմի ձևավորումը», տեխնիկական գիտությունների դոկտոր Ս. Ս. Ուշակովի «Տրանսպորտային էներգետիկայի մի քանի հարցեր» և ՆՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ Ա. Պ. Պետրովի «Էլեկտրոնային հաշվիչ տեխնիկան տրանսպորտում» ուշագրավ հոդվածները, որտեղ առաջ են քաշված տրանսպորտի և ժամանակակից տրանսպորտային գիտության զարգացման վերաբերյալ կարևոր հարցեր։

Ա. Վ. Գորինովը մեծ նշանակություն տալով տրանսպորտի դերին ժողովրդական տնտեսության զարգացման գործում, նշում է, որ տրանսպորտային գիտությունը միշտ էլ ակտիվ դեր է խաղացել տրանսպորտի բոլոր տեսակների տեխնիկական վերասարքավորման հիմնական պրոբլեմների որոշման ուղղությամբ։

ՍՍՌՄ-ում միասնական տրանսպորտային սիստեմի ստեղծման հետազոտումը, ինչպես նշում է հեղինակը, ընդգրկում է գիտա-տեխնիկական և տնտեսական բնույթի կոմպլեքսային հարցեր, որոնք մինչև այժմ ոչ միայն չեն դարձել լայն ուսումնասիրության առարկա, այլև դրանց նկատմամբ դեռևս չկա գիտական մոտեցում։

Ամսագրում զետեղված են նյութեր «Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը ՍՍՌՄ պատմության» բազմահատորյակի հրատարակման ընթացքի, տիեզերքի ուսումնասիրման բնագիտական պրոբլեմների և այլ հարցերի մասին։

КОММУНИСТ 1966, № 2

Ամսագիրը բացվում է «Կոմունիզմ կառուցողի գաղափարական համոզվածությունը» առաջնորդողով։

Պրոպագանդիստներին, դասախոսներին օգնելու նպատակով «ՍՍՌՄ-ը կոմունիզմի մեծ կառուցում է» խորագրի տակ հրապարակված են բազմաթիվ թվեր ու փաստեր ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության, կուլտուրական շինարարության, գիտության ու տեխնիկայի նվաճումների վերաբերյալ։

«Սոցիալիստական տնտեսավարության պրոբլեմները» խորագրի տակ տպագրված է Վ. Լատիրովի «Տնտեսական ռեֆորմը և վարկի աճող դերը» հոդվածը։

«Գաղափարախոսություն, գիտություն, կուլտուրա» բաժնում տպագրված Ի. Ֆրոլովի «Մատերիալիստական դիալեկտիկան և ժամանակակից բնագիտությունը» հոդվածում հարուստ փաստերի և ընդհանրացումների հիման վրա ցույց է տրված, որ բնագիտությունը այժմ հանդիսանում է բնության ճանաչողության ավելի քան բուռն զարգացող բնագավառներից մեկը։ Բնագիտության պրոբլեմները իրենց վրա են հրավիրում բնական գիտությունների (քիմիայի, ֆիզիկայի, մաթեմատիկայի և այլն) ներկայացուցիչների ուշադրությունը։ Ժամանակակից բնագիտության մեջ լայնորեն օգտագործվում են փորձարարական հետազոտությունների նոր միջոցները։

Ժամանակակից բնագիտության մեջ փիլիսոփայական կարևոր պրոբլեմներ հանդիսացող կյանքի էությունը, կենդանական սիստեմի ներքին և արտաքին փոխհարաբերությունները, բիոլոգիական պրոցեսների դետերմինացման առանձնահատկությունը և այլ հարցեր որոշվում են դիալեկտիկական մեթոդով։

Ամսագրում զետեղված են նաև մի շարք հետաքրքիր հոդվածներ ու հաղորդումներ, այդ թվում Վ. Մժավանաձեի «Լենինի նշած ուղիով», «Գիտության և պրակտիկայի կապը ոռոգելի հողագործության մեջ», «Գյուղի աշխատանքային ռեսուրսների օգտագործման պրոբլեմները» և այլն։

ВОПРОСЫ ИСТОРИИ КПСС 1966, № 2

Ամսագրի առաջին հոդվածը, որը կրում է «Կուսակցական համագումարների դերը ՍՄԿ

գործունեության մեջ» (հեղինակ Դ. Ի. Շիտատով) նվիրված է մեր կուսակցության համագումարներին։

Ա. Ս. Սմիրնովի «Բոլշևիկների վերաբերմունքը ձախ էսերների նկատմամբ Հոկտեմբերյան հեղափոխության նախապատրաստման ժամանակաշրջանում» հոդվածում վերլուծվում են Պետրոգրադում, Կրոնշտադտում և Ֆինլանդիայում ձախ էսերների գործունեությունը և նրանց նկատմամբ բոլշևիկների վերաբերմունքը բնութագրող մի շարք նոր նյութեր։

Հոդվածում հատուկ տեղ է տրված ձախ էսերների այնպիսի ներկայացուցիչների գործունեությանը, ինչպիսին են Պ. Պ. Պռոշյանը, Ա. Մ. Ուստինովը։ Պռոշյանը 1917 թ. դեկտեմբերից մինչև 1918 թ. մարտը ղեկավարում էր փոստի և հեռագրի ժողովրդական կոմիսարի պոստը։ Վ. Ի. Լենինը լավ է բնութագրել Պռոշյանին իր «Ընկ. Պռոշյանի հիշատակին» հոդվածում, որտեղ նշում է.

«Ոչ բոլոր ձախ էսերների մասին կարելի է ասել, որ նրանք սոցիալիստներ են, մինչև անգամ, թերևս, նրանցից մեծամասնության մասին այդ չէր կարելի ասել, քանի որ, չնայած նրա դաղափարախոսության հավատարմությանը ռուսական նարոդնիկներին, ոչ սոցիալիստական դաղափարախոսությանը, Պռոշյանի մեջ երևում էր խոր հավատարիմ սոցիալիստը»[1]։

Հետաքրքիր նյութեր են տպագրված նաև Ա. Հ. Լուտչենկոյի «ՍՄԿՊ-ի դեկավարությունը տեխնիկական ինտելիգենցիայի կադրերի ձևավորմանը (1926—1933 թթ.)», Պ. Ե. Եմելյանովի «Վ. Ի. Լենինը և սովետական քիմիայի առաջին քայլերը», «ՍՄԿՊ պատմության բազմահատորյակի նյութերից» և այլ հոդվածներում։

Вопросы литературы

1966, № 1

Ամսագիրը բացվում է բազմաթիվ սովետական հայտնի գրողների նախահամագումարային խոսքերով։

«Տեսության պրոբլեմը» խորագրի տակ տպագրված է Վ. Շլերբինայի «Գրականության օրինաչափությունների բնույթի մասին» հոդվածը, որտեղ հետաքրքիր հարցեր են շոշափված գրականության տարբեր պրոբլեմների վերաբերյալ։

«Արտասահմանյան գրականություն» խորագրի տակ տպագրված է Ռ. Օլոովայի «Նեգրական հեղափոխության ձայները», որտեղ համառոտակի բնութագրվում են ժամանակակից նեգր և ամերիկյան պրոգրեսիվ գրողների ստեղծագործությունները՝ նվիրված ազգային-ազատագրական շարժումներին, առանձնապես նեգրական հեղափոխությանը։

---

1 В. И. Ленин, т. 37, стр. 384.